Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 21.12.2022թ. ժամը 11:30-ին Էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գիլոյան
Հանձնաժողովի անդամ՝ Դավիթ Բաղումյան
Արթուր Սեդրակյան
Արևիկ Կարապետյան
Հասմիկ Աղաբաբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.
1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.1 Ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Գլոբալ Սպորտ» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
3.1 ԷԱՃ-ի Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«Գլոբալ Սպորտ» ՍՊԸ	
		Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	4 634 500	382 346.2	458 815.44

4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին.
4.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո ս.թ դեկտեմբերի 22-ին ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 22.12.2022թ. ժամը 11:00-ին

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին.
5.1 «Գլոբալ Սպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական-բնութագիրը /ապրանքի ամբողջական նկարագիրը/ հստակ չէ, անհրաժեշտ է այն հստակեցնել, ներկայացնելով կոնկրետ մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5.1 կետով արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը շարունակել 2022թ դեկտեմբերի 26-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 26.12.2022թ. ժամը 11:00-ին

7. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

7.1 «Գլոբալ Սպորտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել 5.1 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

8. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

8.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 7.1 կետը՝ «Գլոբալ Սպորտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

9.Գնահատման արդյունքների մասին

9.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9.2 Հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը՝ գնման գործընթացը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Գլոբալ Սպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կարեն Գիլոյան /նախագահ/

---------- Դավիթ Բաղումյան

---------- Արթուր Սեդրակյան

---------- Արևիկ Կարապետյան

---------- Հասմիկ Աղաբաբյան

---------- Անուշ Մարգարյան /քարտուղար